

Ա Ռ

ԱՍՏՈՒԱՍԱՐԷԱԼ ԵՒ ՎԵՀԻՇԱՌ

ՏԵՐ ՏԵՐ ՄԱԿԱՐ Ա.

Սրբազնակատար Կաթողիկոս և Օայրագոյն

Պատրիարք

Ըմենայն Տանս Թորդոմայ

Գահակալ նախամեծար Լուսաւորչահիմ Ըթողոյ

Սրբոյ Էջմիածնի

Էպիսկոպոսապետ մեծ

Եւ Քահանայապետ Հայաստանեայցս

Սուրբ Եկեղեցւոյ

Հովուապետ արթուն բանաւոր հօտիս Քրիստոսի

Հայր մեր և Տէր Հոգւոր.

ԱՄԵՆԵՐԱՆԵԱԼ ԵՒ ՎԵՀԱՇՆՈՐՀ ՏԵՐ

ՕՄԵԱԼ Ս. ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ.

Զգուզնաբեայս երկ մտացս նուիրեալ ի փառս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյս ի ջատագովութիւն նորին իրաւանց և ի բացայտցաւթիւն նուիրապետական դասակարգութեան, ահա ընծայեմ յոտս Սրբոյ Աթողոյց իբր նուէր ի սակաւէ անտի զոր ունիմն, և արկանեմ զիս և զիմն զայս և զամենայն գործս ընդ Բարձր Իշխանութեամբ Գերագահ Կաթողիկոսից Լուսաւորչահիմն սրբոյ Եկեղեցւոյս մերոյ:

Աղէ, ընկալջիր զակար գրութիւն տկար գրչիս և ինձ շնորհեա զկար օրհնութեանդ յանուն Ամենակարողի Տեառն.

Շնորհազարդ Հայրապետից Սրբոյ Օծութեան

Խոնարհորդի և ծառայ

Մաղարիս Վարդապետ Օրմանեան.

Ի Ս. Էջմիածին յ 22 Յունիսի

1886